ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- ----------ի 2026 թվականի №- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №523-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 11-ի ՀՕ-228-Ն օրենքի 22-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №523-Ն որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններում (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ԷԲՑ կանոնների 2-րդ՝

ա. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին, 24.1-ին, 26.2-րդ, 26.3-րդ և 27.2-րդ ենթակետերով.

«9.1) **ԵՊ կայան՝** Օրենքով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող կայան.

24.1) **Պահեստավորող՝** էներգիայի պահեստավորման իրավունք ունեցող և փաստացի պահեստավորող անձ, բացառությամբ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում գտնվող կայանի, իսկ Պահեստավորողի միացման դեպքում՝ նաև այդ միացման համար դիմող անձ.

26.2) **Պահեստավորողի միացման վճար՝** Պահեստավորողի կայանի միացման դեպքում ԷԲՑ կանոնների համաձայն գանձվող վճար.

26.3) **Պահեստավորողի միացում՝** Բաշխման ցանցին Պահեստավորողի կայանի միացում կամ միացման փոփոխություն.

27.2) **Սահմանափակման ենթակա պահեստավորող՝** էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձ՝ բացառությամբ ԵՊ կայանի.».

բ. կետի 14-րդ ենթակետում «արտադրության,» բառից հետո լրացնել « պահեստավորման,» բառը.

գ. կետի 22-րդ ենթակետում «Արտադրողի» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

դ. կետի 23-րդ ենթակետում «Արտադրողը,» բառից հետո լրացնել « Պահեստավորողը,» բառը.

ե. կետի 34-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34) **Տեղեկանք՝** Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ստանալու մտադրություն ունեցող անձին, ինչպես նաև կայանի վերակառուցման մտադրություն ունեցող անձին՝ այն դեպքերում, երբ կատարվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքներ, և որոնք հանգեցնելու են կայանի՝ լիցենզիայով ամրագրված հզորության փոփոխության, Բաշխման ցանցին միացման հնարավորության վերաբերյալ տրամադրվող փաստաթուղթ.».

զ. կետի 35-րդ ենթակետում «էլեկտրակայան» բառից հետո լրացնել « կամ մինչև 10 ՄՎտ դրվածքային հզորությամբ պահեստավորող կայան» բառերը.

2) ԷԲՑ կանոնների 6-րդ և 6.1-ին կետերում «Արտադրողի» բառից հետո լրացնել «, Պահեստավորողի» բառը.

3) ԷԲՑ կանոնների 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին ենթակետով.

«10.1) պահեստավորող կայանների ինտեգրում,».

4) ԷԲՑ կանոնների 32-րդ կետում և 57-րդ կետի 3-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

5) ԷԲՑ կանոնների 49-րդ կետի 2-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը, իսկ «արտադրական» բառից հետո՝ « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

6) ԷԲՑ կանոնների 60-րդ կետում «արտադրողներից» բառը փոխարինել «կայաններից» բառերով.

7) ԷԲՑ կանոնների 13-րդ գլխի վերնագրում «ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ» բառից հետո լրացնել « ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ» բառերը.

8) ԷԲՑ կանոնների 82-րդ կետի՝

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«82. Ցանցային կայանները յուրաքանչյուր տարի մինչև սեպտեմբերի 1-ը Բաշխողին են տրամադրում հաջորդ տարվա էլեկտրական էներգիայի արտադրության կամ էներգիայի պահեստավորման կանխատեսվող ժամային գրաֆիկները՝ համապատասխանաբար ըստ յուրաքանչյուր արտադրող կամ պահեստավորող ագրեգատի, ինչպես նաև՝».

բ. 2-րդ ենթակետում «ցանց» բառից հետո լրացնել « կամ պահեստավորումը Բաշխման ցանցից» բառերը.

9) ԷԲՑ կանոնների 84-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «արտադրողների» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողների» բառերը, իսկ «արտադրության» բառից հետո՝ « կամ պահեստավորման» բառերը.

բ. 2-րդ ենթակետում «գնման երաշխիքները» բառերից հետո լրացնել «, իսկ Պահեստավորողների դեպքում՝ էներգիայի պահեստավորման երաշխիքները,» բառերը.

գ. 3-րդ ենթակետում «արտադրական» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

դ. 6-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

10) ԷԲՑ կանոնների 93-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով.

«2.1) Պահեստավորողները,».

11) ԷԲՑ կանոնների 124-րդ կետում «արտադրողի» բառերը փոխարինել «կայանի» բառերով.

12) ԷԲՑ կանոնների 141-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.5-րդ ենթակետով.

«3.5) ԷԲՑ կանոններով և ԷՄԱ կանոններով նախատեսված դեպքերում և կարգով պահեստավորող կայանի դրվածքային հզորության վերաբերյալ տեղեկությունը չներկայացնելու կամ փոխհոսքերի պայմանագրում էլեկտրական էներգիայի արտադրության կամ պահեստավորման կետ ավելացնելու կամ հեռացնելու համար Բաշխողին չդիմելու դեպքում,».

13) ԷԲՑ կանոնների 146.1-ին կետում «3.3-րդ» թվից հետո լրացնել « և 3.5-րդ» շաղկապն ու թիվը և նույն կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«ԷԲՑ կանոնների 141-րդ կետի 3.5-րդ ենթակետով նախատեսված համապատասխան խախտումը համարվում է վերացված Սպառողի կողմից ԷԲՑ կանոններով և ԷՄԱ կանոններով սահմանված պահանջներին համապատասխան՝ պահեստավորող կայանի դրվածքային հզորության վերաբերյալ կամ փոխհոսքերի պայմանագրում էլեկտրական էներգիայի արտադրության կամ պահեստավորման կետ ավելացնելու կամ հեռացնելու մասին Բաշխողին դիմում ներկայացնելու պահից:».

14) ԷԲՑ կանոնների 5-րդ բաժնի վերնագրում «ՈՒ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով, իսկ «ԻՆՔՆԱՎԱՐ ԷՆԵՐԳԱԱՐՏԱԴՐՈՂԻ» բառերից հետո լրացնել «ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՂԻ» բառերը.

15) ԷԲՑ կանոնների 152-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«152. Սույն բաժինը սահմանում է Բաշխման ցանցին Սպառման համակարգի միացման, Արտադրողի միացման, Ինքնավար էներգաարտադրողի կայանի (հզորության) միացման, Պահեստավորողի միացման, ինչպես նաև Սպառողի սպառման համակարգի,

Արտադրողի, Ինքնավար էներգաարտադրողի և պահեստավորողի կայանի (հզորության) վերակառուցման արդյունքում Բաշխման ցանցի վերակառուցման կարգը և պայմանները:».

16) ԷԲՑ կանոնների 155.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«155.1. Սպառողը պարտավոր է չգերազանցել Պայմանագրով (Հաշվառման քարտով, ԷՄՇ մասնակցի պրոֆիլով) ամրագրված սպառման համակարգի հզորությունը, ինչպես նաև Բաշխողի հետ համաձայնեցնել սպառման համակարգի, արտադրող կայանի և պահեստավորող կայանի հզորության փոփոխությունը: Սպառողն իր սպառման համակարգում էներգիա պահեստավորող կայան տեղադրելուց առաջ այդ մասին գրավոր ծանուցում է Բաշխողին՝ ներկայացնելով կայանի դրվածքային հզորության վերաբերյալ տեղեկություն:».

17) ԷԲՑ կանոնների 159-րդ կետի 7-րդ ենթակետում «ԻԷԱ-ի դեպքում» բառերը փոխարինել «արտադրող կամ պահեստավորող» բառերով.

18) ԷԲՑ կանոնների 184-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողի» բառերից հետո լրացնել «, Սահմանափակման ենթակա պահեստավորողի» բառերը.

19) ԷԲՑ կանոնների 186-րդ կետում « մինչև 150 կՎտ հզորությամբ» բառերից հետո լրացնել « արտադրող» բառը, իսկ «150 կՎտ և ավելի հզորությամբ» բառերից հետո՝ « արտադրող կայանների և 1 ՄՎտ և ավելի դրվածքային հզորությամբ պահեստավորող» բառերը.

20) ԷԲՑ կանոնների 189-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետում «հզորությունը» բառից հետո լրացնել «, իսկ վերակառուցման դեպքում՝ ավելացվող հզորությունը» բառերը.

բ. 4.1-ին ենթակետում «Սահմանափակման ենթակա արտադրողի» բառերից հետո լրացնել « կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողի» բառերը.

21) ԷԲՑ կանոնների 194-րդ և 196-րդ կետերում «լիցենզիա» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման լիցենզիա» բառերը.

22) ԷԲՑ կանոնների 29-րդ գլխի վերնագրում «ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ» բառից հետո լրացնել « ԿԱՄ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՂՆԵՐԻ» բառերը.

23) ԷԲՑ կանոնների 197-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«197. Արտադրողի միացումը կամ Պահեստավորողի միացումն իրականացվում է պայմանագրի հիման վրա, էլեկտրական էներգիայի գնման երաշխիք կամ էներգիայի

պահեստավորման երաշխիք ունեցող կայանների դեպքում՝ Հանձնաժողովի սահմանած օրինակելի ձևերին համապատասխան:».

24) ԷԲՑ կանոնների 198-րդ կետում «Արտադրողի միացման համար Արտադրողը հայտ է ներկայացնում Բաշխողին՝ կցելով ԷԲՑ կանոնների N 2 հավելվածում նշված տեղեկությունը, ինչպես նաև՝» բառերը փոխարինել «Արտադրողի միացման կամ Պահեստավորողի միացման համար համապատասխանաբար Արտադրողը կամ Պահեստավորողը հայտ է ներկայացնում Բաշխողին՝ կցելով ԷԲՑ կանոնների N 2 հավելվածում նշված տեղեկությունը, ինչպես նաև.» բառերով, իսկ 1-ին ենթակետում «Արտադրողի» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

25) ԷԲՑ կանոնների 199-րդ կետում «միացումը» բառերից հետո լրացնել « կամ Պահեստավորողի միացումը» բառերը, իսկ 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքում հաշվարկում է Արտադրողի միացման վճարի կամ Պահեստավորողի միացման վճարի նախնական չափը, որը որոշվում է ԷԲՑ կանոնների N3 հավելվածով նախատեսված համապատասխանաբար Արտադրողի միացման վճարի կամ Պահեստավորողի միացման վճարի խոշորացված նախահաշվի հիման վրա,».

26) ԷԲՑ կանոնների 200-րդ, 201-րդ և 202-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«200. Արտադրողի կամ Պահեստավորողի կայանի՝ մինչև Միացման կետն ընկած հատվածի կառուցման աշխատանքներն իրականացնում է համապատասխանաբար Արտադրողը կամ Պահեստավորողը՝ համաձայն Բաշխողի տրամադրած Տեխնիկական պայմանների հիման վրա կազմված նախագծի (միացման սխեմայի):

201. Լիցենզիա ունեցող Արտադրողների կամ Պահեստավորողների պարագայում Բաշխողի կողմից Տեխնիկական պայմանները տրամադրվում են համապատասխանաբար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով կամ էներգիայի պահեստավորման լիցենզիայով ամրագրված՝ կայանի կառուցման ժամանակահատվածի չափով, ու երկարաձգվում՝ նշված ժամանակահատվածի երկարաձգման դեպքում այդ ժամկետով և նույն պայմաններով, իսկ մնացած դեպքերում՝ Տեխնիկական պայմանները տրամադրվում են երկու տարի ժամկետով:

202. Կայանը Բաշխման ցանցին միացնելու նպատակով Բաշխման ցանցում անհրաժեշտ նոր հզորությունների կառուցման, առկա հզորությունների վերակառուցման (այդ թվում՝ նախագծման) համար Արտադրողը կամ Պահեստավորողը Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքում Բաշխողին վճարում է համապատասխանաբար Արտադրողի միացման վճար կամ Պահեստավորողի միացման վճար, որը հավասար է այդ աշխատանքների համար անհրաժեշտ ծախսերի հանրագումարին: Եթե Բաշխողը՝ ելնելով Բաշխման ցանցի հետագա հեռանկարային զարգացման անհրաժեշտությունից, նախատեսում է կառուցել Կայանը Բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ հարաչափերը գերազանցող ցանց, ապա այդ մասով Բաշխողի կողմից կատարվելիք ծախսերը Արտադրողի միացման վճարի կամ Պահեստավորողի միացման վճարի հաշվարկում չեն ներառվում:».

27) ԷԲՑ կանոնների 203.1-ին կետում «Սահմանափակման ենթակա արտադրողի» բառերից հետո լրացնել « կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողի» բառերը.

28) ԷԲՑ կանոնների 204-րդ կետում «Արտադրողն» բառը փոխարինել «Արտադրողը կամ Պահեստավորողը» բառերը.

29) ԷԲՑ կանոնների 205-րդ կետում «Արտադրողը» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողը» բառերը.

30) ԷԲՑ կանոնների 206-րդ կետի 3-րդ ենթակետում «Արտադրողի» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

31) ԷԲՑ կանոնների 207-րդ կետում «սահմանած դեպքերում» բառերից հետո լրացնել « Արտադրողի միացման վճարի կամ Պահեստավորողի» բառերը.

32) ԷԲՑ կանոնների 208-րդ կետում «Արտադրողի սեփականությունը» բառերը փոխարինել «համապատասխանաբար Արտադրողի կամ Պահեստավորողի սեփականությունը» բառերով.

33) ԷԲՑ կանոնների 209-րդ կետի՝

ա. առաջին նախադասությունում «Արտադրողը» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողը» բառերը.

բ. երկրորդ նախադասությունում «Արտադրողի միացման վճարի» բառերից հետո լրացնել « կամ Պահեստավորողի միացման վճարի» բառերը, իսկ «Արտադրողին է»

բառերը փոխարինել «համապատասխանաբար Արտադրողին կամ Պահեստավորողին է» բառերով.

34) ԷԲՑ կանոնների 210-րդ կետի առաջին պարբերությունում «Արտադրողը» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողը» բառերը.

35) ԷԲՑ կանոնների 211-րդ կետում «Արտադրողի» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

36) ԷԲՑ կանոնների 220-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«220. Ինքնավար էներգաարտադրություն իրականացնելու մտադրության դեպքում Սպառողը գրավոր դիմում է ներկայացնում Բաշխողին՝ կից ներկայացնելով՝

1) Հաշվառման քարտի վերաբերյալ տեղեկություն,

2) կայանի նախատեսվող հզորության վերաբերյալ տեղեկություն:».

37) ԷԲՑ կանոնների 221-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«221. Բաշխողը ստուգում է ԷԲՑ կանոնների 220-րդ կետում ներկայացված տեղեկության համապատասխանությունը Օրենքով սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Հանձնաժողովին առաջարկված՝ ինքնավար էներգաարտադրողների արտադրող կայանների միացման շրջանակում գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների վերաբերյալ պահանջներին և.

1) համապատասխանության դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում Սպառողին է ներկայացնում ԷԲՑ կանոնների 257-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված վճարի վճարումն իրականացնելու համար հաշվեհամարը, իսկ

2) անհամապատասխանություն հայտնաբերելու կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Հանձնաժողովին առաջարկված՝ ինքնավար էներգաարտադրողների արտադրող կայանների միացման շրջանակում գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների լրացված լինելու դեպքում մերժում է հայտը՝ նշելով հիմքերը:».

38) ԷԲՑ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 221.1-ին կետով.

«221.1. Այն դեպքում, երբ ԷԲՑ կանոնների 220-րդ կետում նշված դիմումների բավարարումը կհանգեցնի ԷԲՑ կանոնների 221-րդ կետում նշված՝ ինքնավար էներգաարտադրողների արտադրող կայանների միացման շրջանակում գումարային

հզորությունների առավելագույն չափաքանակների գերազանցմանը, Բաշխողն այդ դիմումներն ուսումնասիրում և քննարկում է ժամանակագրական սկզբունքով՝ ըստ դրանց ներկայացման հաջորդականության, մինչև չափաքանակների լրանալը:».

39) ԷԲՑ կանոնների 222-րդ կետում «ԻԷԱ-ին» բառը փոխարինել «Սպառողին» բառով.

40) ԷԲՑ կանոնների 240-րդ կետում «Արտադրողի» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

41) ԷԲՑ կանոնների N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

ա. վերնագրում «ԱՐՏԱԴՐՈՂԻ» բառից հետո լրացնել « ԿԱՄ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՂԻ» բառերը.

բ. 1-ին կետի 2-րդ ենթակետը «Արտադրող» տողից հետո լրացնել «Պահեստավորող» տողով.

գ. 1-ին կետի 6-րդ ենթակետում «Արտադրողի» բառը փոխարինել «Տեղակայանքի» բառով.

դ. 1-ին կետի 13-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

ե. լրացնել 3-րդ կետով՝ համաձայն սույն որոշման N1 հավելվածի.

42) ԷԲՑ կանոնների N 3 հավելվածում «ԱՐՏԱԴՐՈՂ» բառից հետո լրացնել « □ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՂ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ----------ի 2026թ.